

ՀՈԴԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

Մեր եկեղեցական գործիչներից Գևորգ Դ. կաթողիկոսին իրավամբ կարելի է դասել եկեղեցու լուսավորիչների շարքը։ Ըստունելով կաթողիկոսական աթոռը նա իր ամենօրյա հոգաւը դարձրեց հայ եկեղեցին բարեկարգելու խնդիրը։ Անհրաժեշտ էր ամրապնդել եկեղեցու ներքին կարգը ու կանոնը, կարգավորել ժամակարգությունը, ծիսականուարությունները, պատշաճ բարձրության վրա դնել երգեցողությունը և այսպիսով ավելի բարձրացնել հայ եկեղեցու հեղինակությունը։

Գետք Դ. կաթողիկոսը այդ նկատառությունից ենելով նախ ձեռնարկեց եկեղեցական կանոնական՝ ծիսական գրականության վերանայման ու հրատարակմանը։ Նրա օրով վերջնական մշակման ենթարկեցին ու հրատարակմեցին ու պատրաստի արարողության խորհրդատերը, եկեղեցական ձեռնարկան մարդկանց կաթողիկոսական ձեռնադրության կաթողիկոսի վերջարերդ, մյուսոնորհնության, կաթողիկոսական ձեռնադրության կանոնագրքերը, մի շարք ժամազգրքեր և այլն, ժամասացությունը և եկեղեցական որոշ ծիսակատարություններ ազատվեցին ավելորդ կրկնության քնույթի կրող մի շարք աղոթքներից և ասմունքներից, որով ժամակարգությունը ոչ միայն թեթևացվեց, այլև այն դրվեց ավելի պարզ ձևի մեջ։

Առավելապես ժամահոգված լինելով մեր եկեղեցական երգեցողությունն անաղարտ պահելու, ինչպես և մոռացությունից և աղավաղություն փրկելու խնդրով, Գևորգ Դ. կաթողիկոսը Ս. Էջմիածին հրամիրեց ժամանակի հայտնի երգիչներին ու մասնակի հետներին և հայկական նոտաներով ձայնադրել ավել մեր շարականները, մեղեդիները

և այլ հոգիոր երգեր։ Գևորգ Դ. կաթողիկոսի չնորհնելի է, որ այսօր մենք ունենք եկեղեցական հարազատ երաժշտություն։

Սակայն Գևորգ Դ. կաթողիկոսի համար այսքանը դեռևս շատ քիչ էր հայ եկեղեցին ու Մայր Աթոռությունը կոչման բարձրության վրա պահելու տեսակետից։ Անհրաժեշտ էր ունենալ եկեղեցական աշալուրջ, դաստիարակված և լուսամթու կաղըրեր։ Կանքը հրամայարար պահանջում էր քայլել ժամանակի պահանջների համեմատ, այլև հնարավոր չչը բավարարվել վանական միջավայրում սահմանափակ կրթություն ստացած մարդկանցով և նրանց ձեռքը հանձնել վանքերի, եկեղեցիների և թեմերի գեղագլարությունը։

Կար նաև մի հանգամանք Յարական քաղաքականության հետևանքով կովկասյան ժողովուրդների զավակները, որոնք ստանում էին մայրենի լեզվով կրթություն այդ ժողովրդների միջոցներով պահպող դպրոցներում, հնարավորություն չունեին բարձրագույն կրթություն ստանալ ուսւական համալսարաններում։ Այդ ժողովուրդների միջամկ և չքավոր խավերը նյութական հնարավորություն չունեին իրենց ուսումնածարակ երեխաներին Ռուսաստանի լուսավոր կենուրունները դորձուղել բարձրագույն կրթություն ստանալու համար։

Մյուս կովկից առաջ էր քաշվում հայկական եկեղեցական ծխական զպրոցների պատրաստված ուսուցիչներ մատակարարելու սուրբ պահանջը։ Այս կարիքները հողալու համար Գևորգ Դ. կաթողիկոսը հիմնեց ու իջմիածնի հողեւոր ճեմարանը։

Պետք է ասել, որ ճեմարանը լրիվ չափով կարողացավ այս պահանջներին գոհա-

ցում տալ և կենսադործեց այն բոլոր խըն-
դիքները, որոնք պատմականորեն դժվեցին
յաւը ասաց:

Ճեմարանի դործունեությունը եղան
բեկմանավոր և արդյունավետ: Ճեմարանը
տվեց մի շաբաք ականավոր եկեղեցական-
ներ, հայակենուեր, գրականագետներ,
գրողներ, հաստրակական դործիչներ և
բազմաթիվ լավագույն ուսուցիչներ:

Մեծ էր ճեմարանի պատմական և հո-
սարակական դերը, մանավանդ նրանով,
որ այն հանդիսանում էր համայն հայու-
թյան բարձրագույն դպրոցը:

Ճեմարան էին զայիս ուսանելու ոչ
միայն կովկասում ապրող հայ ժողովրդի,
այլև արասասահմանյան (Պարսկաստանի,
Պոլսի, Ռումինիայի, Բոլգարիայի և այլ
վայրերի) հայության զավակները: Այս-
պիսով ճեմարանի լուսավոր դռները բաց
էին բարձրի առաջ:

Գիշերօթիկ դպրոցի պայմանները,
լավագույն դասառումների կազմը, որով
ապահովված էր ճեմարանը, ավեցին փաշ-
լուն արդյունքներ:

Ճեմարանը հայ եկեղեցուն տվել է ա-
կանավոր եկեղեցականներ հանձին Ամե-
նայն Հայոց Հայրապետության Ազգային
Տեղակալ Տ. Գելորդ արքեպիսկոպոս Զեռ-
բեքչյանի, Կիլիկիայի Տան նորընտիր կա-
թողիկոս Տ. Գարեգինի արքեպիսկոպոս Հա-
յովակյանի, Կարապետ եպիսկոպոս Հեր-
Մկրտչյանի, Հուսիկ արքեպիսկոպոս Զեռ-
բեքչյանի, երաժշտագետ Կոմիտասի, Լեզ-
վարան Մագուույան վարդապետի, երա-
ժտագետ Սպիրիտոն Մելիքյանի, ականա-
վոր հայրապետներ՝ Մանուկ Արեգյանի,
Մարիամյանի և այլն:

Ի՞նչ կարող ենք հուսալ և ակնկալ ե-
մնք ներկայումս բացվելիք Հոգեւոր ճե-
մարանից:

Ներկայս ճեմարանը կոչված պիտի
լինի առաջին Հերթին Հոգեւոր կադրեր
պատրաստել թե Միության և թե արտա-
սահմանյան եկեղեցիների համար: Այս պի-
տի կազմի նրա աշխատանքի հիմնական

ինդիքը: Ապկայն, իհարկե, չի կարելի
ճեմարանը վերաբանաւով սահմանափակ-
վել միայն զբանով: Մեր կարծիքով ճե-
մարանը պիտի զբաղվի նաև հայ եկեղե-
ցական անցյալ կյանքի ուսումնասիրու-
թյամբ, քանի որ մեր անցյալի եկեղեցա-
կան կյանքի հետ են կապված եղել ոչ
պակաս պատմական հետաքրքրական և ու-
սումնասիրության արժանի խնդիրներ:

Բացվելիք ճեմարանը պիտի ունենարա-
ցառապես կը ունական թեքում, պիտի խո-
րան և մասնագիտանա հատկապես մեր
եկեղեցական և հոգեւոր կուլտուրայի ընա-
գավաններում, իսկ այդ տեսակի եցնա-
քներ գես շատ անելիքներ ունենք:

Չնայած մեր եկեղեցական անցյալ
կյանքի ուսումնասիրության դժով կա-
տարված են որոշ աշխատանքներ և հրա-
պարակի վրա են այսպիսի լուրջ գործեր,
ինչպիսին է, Մաղաքիա արքեպիսկոպոս
Օթմանյանի «Ազգապատումը» և այն,
այնուամենայնիվ չի կարելի սպասաված
համարել մեր եկեղեցական պատմության,
մեր անցյալ եկեղեցական կյանքի լուսա-
բանությունը և նրանց ուսումնասիրու-
թյունը և սխալված չենք լինի, եթե ա-
սենք, որ այն նորո՞նոր է սկսում ուսումնա-
սիրվել և բազմակողմանիորեն պարզաբն-
վել:

Մեր եկեղեցու պատմության այդ նոր
հետազոտողները, այդ նոր լուսաբանող-
ները, մեր եկեղեցական կյանքի բազմազան
ինչիների նոր մեկնիչները պետք է լինեն
Հոգեւոր ճեմարանն ավարտողները:

Վերոհիշյալ բոլոր հանդամանքներին:
ինքնին արդարացնում են ճեմարանի բա-
ցումը, որոին անհրաժեշտություն:

Ողջունելով Մայր Աթոռի այս հոյա-
կապ ճեմարակությունը ի բոլոր սրան հա-
ջողություն ենք ցանկանում բացվելիք հո-
գեւոր ճեմարանին և Ամենայն Հայոց Հայ-
րապետության Ազգընտիր Տեղակալ Ամե-
նապատիր Տ. Գեղորդ արքեպիսկոպոս
Զեռորեքչյանին իր այս պատմական, ուշա-
գրավ ճեռնարկումի մեջ: Ա. Վ. Ր. Դ. Պ. Պ.